Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3029



265
4-21

A 3.

2010

F 2001

265
4-21

ԿԱՆՈՆ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1876 – ՌՅԻԵ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Գ,

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

53519-ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Մ. Մաշտոցի անվան

35220-67

ԿԱՆՈՆ

ՀԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Յորժամ Աթոռ Առաքելոյն սրբոց Բարթուղիմէոսի եւ Թադէոսի եւ օրինաւոր յաջորդի նոցին սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Պարթեւի պարապեցի, եւ Հայաստանեայցս եկեղեցի այրիացեալ մնայցէ ի փեսայէն իւրմէ երկրաւորէ, եւ հանդերձին ամբառնալ զոք յԵպիսկոպոսաց յայն պատիւ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց, պարտ եւ արժան է միտ դնել, զի լինիցի ընտրութիւնն ըստ սահմանի կաթուղիկէ Եկեղեցւոյս, մի ինքնագլուխ եւ մի գաղտագողի ձեռնադրութեամբ եւ մի կաշառօք, զի մի ընտրեալն եւ ընտրողք անկանիցին ընդ նզովիւք. քանզի ոչ հաճի Աստուած ընդ այնպիսի ձեռնադրութիւն։ Այլ պարտ է առնել զընտրութիւնն համբէն ժողովրդովք հայտեռ ազգիս՝ հանդերձ ամենայն ժառանգաւորօք եկեղեցւոյն մերոյ որ ի ցեղն ընդ ամենայն աշխարհ, ի Ցաճկաստան, ի Ռուսաստան, ի Պարսկաստան, ի Հընդիկս եւ ի զտնազան կողմանս Եւրոպայ եւ Ասիոյ եւ այլոց մասանց աշխարհի։

Եւ լինի ընտրութիւնն այսպէս։ Առաջնորդք վիճակաց եւ վանահարք, Եպիսկոպոսք, Քահանայք եւ ժողովուրդք տեղեաց՝ տեղեաց ընտրեն ժողովով ի միջոց ինքեանց զերկուս պատգամաւորս ի պատուաւոր եւ ի բարեպաշտ եւ ի խոհական անձանց, յեկեղեցականաց՝ այս ինքն յԱռաջնորդաց՝ յԵպիսկոպոսաց կամ ի Վարդապետաց կամ գէթ յԱւագ երիցանց, եւ յաշխարհականաց, եւ տուեալ նոցա զհրահանգս կարեւորս վասն ընտրելի անձին՝ առաքեն զնոսա՝ ի Մայր Աթոռս ի սահմանեալ ժամանակի։ Իսկ եթէ ոմանք ի հեռաւոր վիճակայնոց ի պատճառս անակնկալ կամ անհրաժեշտ խափանածոյ իրիք չկարիցեն արձակել ի սուրբ Էջմիածին զպատգամաւորս, առաքեն այսր ըզհաւանութիւն կամ զկարծիս իւրեանց կնքեալ նպամակաք, որ բացեալ լինին ի մեծի ժողովի անդ յանդիման պատգամաւորաց ամենեցուն։

Ապա քննութեամբ ժողովոյն, որ գումարի ի տաճարիս սրբոյ Էջմիածնի, նախ ընտրին բազմութեամբ ձայնից երիք արժանաւոր դատեալ Եպիսկոպոսունք, որք ի ցեղն վկայեալք յամենայնի, յուղղափառ դաւանութեան Քրիստոսական հաւատոյ եւ ջատագովք հայրենի աւանդից, նախանձաւորք ուղղութեան կարգաց եւ կանոնաց, եւ սիրողք եւ պահպանողք ծիսից եւ արարողութեանց Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ, անբամբաս քաղաքավարեալք ի գործս բարիս եւ ի գնացս առաքինիս, ի սրբութեան եւ յանարատութեան բարուց, լցեալք գիտութեամբ եւ իմաստութեամբ։ Եւ ապա վերստին բազմութեամբ ձայնից լինի ընտրութիւն արժանաւորագունին յերեցունց անտի Եպիսկոպոսաց, որ ունելով զամենայն վերոյգրեալ բարեմասնութիւնս՝ յանձին բերիցէ զիսկական տիպ եւ զնմանութիւն հիմնադրի Արարատեան Մայր Աթոռոյս՝ սրբոյն Գրիգորի երկրորդ Լուսաւորչին եւ արժանաժառանգ յաջորդաց նորա, որպէս զի կարող եցէ հովուել ըստ արժանւոյն զժողովուրդն որ հաւատացեալ նմա յԱստուծոյ։

Իսկ ի Կիւրակէին յորում ունիցի լինել ձեռնադրութիւնն եւ օծումն Հայրապետական, ի գիշերին լինի հսկումն. եւ ի ժամ սրբոյ Պատարագին զգենու Ընտրեալն զեպիսկոպոսական զգեստսն ի սուրբ Գէորգեան պահարանին, ընդ նմա զգեստաւորին եւ երկոտասան Արքեպիսկոպոսունք, եւ ելանեն գան հանդիսիւ ի դուրս Սարկաւագաց եւ ամենայն զարդուք, եւ դարձեալ որք եղանակեն զԽորհուրդ խորին, եւ սկսանի Ընտրեալն մատուցանել զսուրբ Պատարագն մինչեւ ցայն տեղին որ ասէ. Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով եւ լոյն։

Ապա կացեալ Ընտրելոյն ի միջավայրի բեմին առաջի սրբոյ Սեղանոյն՝ ընթեռնու ի լուր ամենեցուն զթուղթն ուխտի իւրոյ եւ խոստման օրինակ զայս.

« (Այս անուն) Ծառայ Քրիստոսի եւ Եպիսկոպոս « վիճակին (այս անուն), միաբան սրբոյ ուխտիս Էջ- « միածնի, կամաքն Աստուծոյ եւ ընտրութեամբ հա- « մբէին աղգիս Հայոց կոչեցեալ յԱբրահամեանս Աթոռ « կաթուղիկոսութեան տեղեանցն Հայոց, ապաւինեալ « յօգնականութիւն շնորհաց Բարձրելոյն՝ խոստանամ « եւ ուխտեմ առաջի սրբոյ սեղանոյս եւ աստուածընտ- « կալ սուրբ նշանացս, յանձն առնուլ զպաշտօնս զայս « Եպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս Եկեղե- « ցւոյ, եւ բոլորապատուղ նուիրմամբ ընծայել զանձն « իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց « եւ կաթուղիկոսական պարտուց, եւ առաջնորդել « աղգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան « Քրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դա- « ւանութեան եւ ըստ Հայրապետական կարգաց եւ « կանոնաց Աստուածպաշտութեան, անստերիւր եւ « անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիղ « հետս գնացից արժանաժառանգ ցաջորդաց սրբոց « առաքելոցն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի եւ սուր- « բոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի զգու- « շաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր Աթոռոյս « Հայաստանեայցս » :

Յետ այնորիկ անկանի է Ծառայն Ընտրեալն է Հայրապետութիւնն, և երկոպատան Երիս եպիսկոպոսանէն շուրջանակի պար առեալ կանգնին զնովա։

Եւ ասկանին զԱղօթան Զի. « Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան, մինչև ցայն տեղի որ ասէ. « Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից » : Եւ ասէ մի ոմն յԵպիսկոպոսաց զփարոցն զայս.

Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած՝ վասն Ծառայի իւրոյ որ ընտրեցաւ եւ կոչեցաւ ի կարգ պաշտաման եւ ի պատիւ Կաթուղիկոսութեան Հայրապետական Աթոռոյ սրբոցն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի, եւ մեծի խոստովանողին Քրիստոսի սրբոյն Գրիգորի մերոյ երկրորդ Լուսաւորչին, զի արժանի լիցի ի ձեռն այսր կոչման եւ ձեռնադրութեան՝ առնուլ զշնորհս եւ զզօրութիւն ի պարգեւատուէն բարեաց յամենակալէն Աստուծոյ. կեցուսցէ եւ ողորմեսցի։

Պաշտօնեայքն ասէն դիաբան ղեմ յայնէ.

Կեցո՛ Տէր։

Երեցագոյնն յԵրիսեպիսկոպոսաց ասէ երեխասասոն Տէր ողորմեա՛ և ապա յարէ.

Աստուածային և երկնաւոր շնորհն, որ միշտ ընու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական Եկեղեցւոյ, կոչէ (այս անուն) Երբեպիսկոպոս (այս անուն վիճակի) յԵպիսկոպոսութենէ ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայցս Եկեղեցւոյ՝ ի Հովուապետութիւն և յԱռաջնորդութիւն ընդհանուր Աղգիս Հայոց՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս։

Եւ երկոպատան Եպիսկոպոսանէն զյեսեսերեանց երեալ է վերայ գլխոյ Ընտրելոյն՝ ասէն.

Մեք դնեմք ձեռս ի վերայ, և ամենեքեան աղօթս արարէք, զի արժանաւոր լիցի սա զիշխանութիւն Առաքելական Աթոռոյս անարատ պահել առաջի Աստուծոյ։

Եւ ապա մի ոմն յԵրեսեպիսկոպոսաց ընդունէ զաղջն.

Զոհանամք զքէն՝ Աստուած մշտնջենաւոր՝ Աստուած յաւիտենական՝ հզօր զօրութեամբ և մեծ վայելչութեամբ, Տէր և արարիչ ամենայնի։ Որ անդադար ձայնիւ փառաբանիս ի հոգեղինացն և ի հրեղէն սքանչելի արարածոց քոց։ Դու ինքն անսկիզբն և անժամանակ Աստուած, անկարօտ գոլով ամենայնի, հաճեցար հեղուլ առատապէս զպարգևս ողորմութեան քո աբարչութեանդ շնորհիւ, և հաղորդս արարեր զստեղծուածս ձեռաց քոց անճառ վայելչութեան թագաւորութեանդ քո։ Դու գոյացուցեր հրաշակերտ գօրութեամբ զեմանալեացն դասս, որք սքանչելի գեղապարութեամբ կան ի պաշտօն փառաց Մեծիդ Աստուծոյ և վայելեն ի լոյս Աստուածութեանդ քո, և ոչ զնոսա միայն փառաբանիս քեզ կարգել կամեցար, այլ յաղթեալ յանսահման գթութենէդ՝ արարչագործեցեր ի հողոյ զմարդն՝ քոյով ձեռամբդ ըստ պատկերի քում զնա յօրինելով՝ բանական հոգւոյն տրչութեամբ, և իշխան զնա գոյիցս կացուցեր, և զերագոյն փառօք պայծառացուցեր, որպէս և զմեր անարժանութիւնս ի թիւ անդրանկացն որ յերկինս են՝ գրեցեր, և ի բանական և ի հոգևոր պաշտօնս յայս զմեզ հրաւիրեցեր, և քահանայապետս և վարդապետս, երիցունս և սարկաւագունս՝ և սաղմոսերգուս, և զայլ ևս կարգս վայելչութեան ըստ վերնաճեմ զուարթնոցն դասուց ի տաճարի փառաց Ընուանդ քո՝ ի սպասաւորութիւն ահաւոր Աստուածութեանդ արժանաւորս առնելով տնօրինեցեր՝ ըստ կամաց քոց բարեսիրաց։ Իսկ մեք հողանիւթեայքս և մահկանացուք՝ դիտելով զմերս անարժանութիւն՝ չեմք բաւական այսմ մեծի և ահաւոր խորհրդական կոչմանս, որ և հոգեղինացն և հրեղինաց սարսափելի է, եթէ ոչ դու Աստուած մարդասէր՝ զիջանիս ի մերս տկարութիւն, որպէս և հրաւիրեցեր զմեզ ի պաշտօն փառաց անուանդ քո սրբոյ։ Դու առաքեցեր զՄիածին Որդիդ քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որ վերաստեղծեալ նորոգեաց զմեզ ի հնութենէ ապականութեան մեղաց, և լուսաւորեաց զիաւար մտաց մերոց՝ լուսափայլ ծագմամբ գալստեան իւրոյ, և ուսոյց մեզ կարդալ առ Հայրդ բարեգութ և մարդասէր, և առ նախախնամող և կենդանարար սուրբ Հո-

գիդ. խոնարհեցաւ զթութեամբ ի կարիս ընութեան մերոյ՝ որ նոյն ինքն է ճառագայթ փառաց և պատկեր բարերարութեան քո, և զգեցաւ մարմին անապական յանարատ և ի միշտ կուսէն Մարիամայ, և կենդանագործեալ զազգս մարդկան՝ արար մեզ փրկութիւն հաճութեամբ քով, և զանպատում խորհուրդ Աստուածութեանդ՝ որ ծածկեալն էր յաւիտեանց և յազգաց՝ յայտնեաց մեզ, որով արժանաւորեցաք անճառ շնորհաց Աստուածութեանդ Տէր։ Դատապարտեաց զմեզս ի մարմնի իւրում, և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ խաչին և անապական թաղմամբ և յարութեամբ՝ և համբարձմամբն յերկինս։ Առաքեաց զէակիցն իւր և զհամագոյակից քո զՀոգին սուրբ ի դասս առաքելոց՝ մինչդեռ նստէին ի վերնատունն խորհրդոյ, և բաժանմամբ հրեղէն լեզուաց՝ արբոյց նոցա ըզհուրն կենդանի, զկիզանողն մեղաց, և կարգեաց զնոսա քարոզս ամենայն տիեզերաց, և նոքա ըստ յառաջագոյն սահմանելոյն քում եղեն փառաբանիչք սրբոյ Երրորդութեանդ, սերմանելով զբանն կենաց յոգիս մարդկան։ Որոց և փոխանորդս և ժառանգս յարուցանես միշտ ի սուրբ Կաթուղիկէ առաքելական Եկեղեցւոջ, հովուել խնամով և պահպանել զգուշութեամբ զբանաւոր հօտ քո, զոր ստացար քեզ ժողովուրդ սեպհական՝ արեամբ Միածնի քո։

Եւ արդ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, ընկալ զպաղատանս մեր ամենեցուն՝ ժողովելոցս ի տաճարի սրբութեան փառաց անուանդ քո, և զծառայս քո՝ զոր ընտրեցեր և կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քո և յԵպիսկոպոսապետութիւն սրբոյ Կաթուղիկէ առաքելական Եկեղեցւոյ, արժանի արա լինել արթուն վերադիտող և քարոզ ճշմարտութեան ուղղափառ հաւատոյ։ Տո՛ւր սմա զառաքելական և զհայրապետական շնորհս, զօրացո՛ զսա ի գործս բարիս, կալ առաջի քո անարատ վարուք և անսայթաք գնացիւք յամենայն ճանապարհս արդարութեան՝ ըստ կամաց քոց սրբոց և բարեսիրաց, զի արժանի լիցի յաւիտենական կենացն՝ ընդ ամենայն սուրբս քո։ Եւ հանդերձ ամենեքումբք՝ զորս ընծայեացէ քեզ ի ժողովրդոցն հաւատացելոց ի խնամն հովուապետութեան իւրոյ, և ի սրբասէր պաշտօնէից զորս կարգեսցէ զգուշաւոր ձեռնադրութեամբ ի սպասաւորութիւն սրբոյ Եկեղեցւոյ, եպիսկոպոսօք և քահանայիւք և սարկաւագօք, փառաւորեսցէ զքեզ՝ Հայր ամենակալ, և զՈրդիդ քո Միածին՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և զկենդանարար Հոգիդ քո սուրբ, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ Եպիսկոպոսն՝ որ ըստ կանն ընդունուն զնն ի յառաջիկայ ընդունելոյն ծոցդ և զԱ-եպիսկոպոսանն և զՀաւատամքն։

(Սաղմոս.) Յիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա։

ԸՆԴՈՒՆԵԼՈՅ ՅԵՐԳՆ։

Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ. եւ դու մատուսցես առ քեզ զԱհարոն զեղբայր քո՝ եւ զորդիս նորա ընդ նմա՝ յորդւոցն Իսրայէլի՝ քահանայանալ ինձ. զԱհարոն եւ զՆաբադ եւ զԱբիուդ եւ զԵղիազար եւ զԻթամար զորդիս Ահարոնի։ Եւ արասցես պատմուճան սուրբ՝ Ահարոնի եղբօր քում՝ ի պատիւ եւ փառս՝ եւ դու խօսեսցիս ընդ ամենայն իմաստունս մտօք՝ զորս լցուցից հոգւովք իմաստութեան՝ եւ արասցեն պատմուճան սուրբ՝ Ահարոնի ի սրբութիւն՝ որովք քահանայանայցէ ինձ։ Եւ այս օրինակ պատմուճանացն՝ զոր առնիցեն. զպղնձնաւորն եւ զվակաս զուսովք եւ զլանջօք՝ եւ զպատմուճանն բեհեզեայ՝ եւ խոյր եւ կամար. եւ արասցեն պատմուճան սուրբ Ահարոնի եղբօր քում եւ որդւոց նորա՝ քահանայանալ ինձ։ Եւ առցեն նոքա ոսկի եւ կապուտակ եւ ծիրանի եւ կարմիր մանեալ եւ բեհեզ։

Եւ արասցեն զվակասն յոսկւոյ սրբոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ՝ գործ ոստայնի նկարակերպ։ Երկու վակասք ընդ միմեանս խառնեալք. եւ եղիցին ի վերայ երկոցունց կողմանց նորա հաստատեալք. եւ գործ վակասին՝ որ իցէ ի վերայ նորա՝ ըստ նմին օրինակի. գործ անդստին ինմանէ լինիցի՝ յոսկւոյ սրբոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ։ Եւ առցես երկուս ականս զըմրուխտս՝ եւ գրեսցես ի նոսա զանուանս որդւոցն Իսրայէլի. զվեց անուն նոցա ի միում ական՝ եւ զայլն եւս վեց՝ յերկրորդում ականն՝ ըստ ազգս իւրեանց. գործ ճարտարութեան ակնագործաց. քանդակ կնքոյ քանդակեսցես զերկոսին ականսն՝ ըստ անուանց որդւոցն Իսրայէլի. տպաւորեալս եւ քանդակեալս ոսկւով արասցես զնոսա։ Եւ դիցես զերկուս ականսն ի վերայ ուսոց վակասին՝ զի լինիցին ականքն յիշատակ որդւոցն Իսրայէլի՝ եւ բառնայցէ Ահարոն զանուանս որդւոցն Իսրայէլի առաջի Տեառն ի վերայ երկուց ուսոց իւրոց՝ ի յիշատակ վասն նոցա։

Եւ արասցես վահանակս յոսկւոյ սըրբոյ, եւ արասցես երկուս վերջս յոսկւոյ սրբոյ մանուածոյս ծաղկեալս՝ գործ հիւսկէն. եւ դիցես զվերջսն մանուածոյս ի վերայ երկոցուն վահանակացն առ վտաւակօքն նոցա յառաջոյ կողմանէ։

Եւ արասցես զտախտակն դատաստանաց գործ նկարակերպ. ըստ ձեւոյ վակասին արասցես զնա, յոսկւոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ։ Եւ արասցես զնա չորեքանկիւնի, թղաւ յերկայնութիւն եւ թղաւ ի լայնութիւն, եւ ընդելուզցես ի նմա ընդելուզածս, ըստ չորեքկարգեան ականց։ Կարգ ականցն. առաջին զմրուխտ եւ սարդիոն եւ տպազիոն, կարգ մի. եւ կարգն երկրորդ՝ կարկեհան եւ շափիղա եւ յասպիս. եւ կարգն երրորդ՝ գոճազմ եւ ակատ եւ սուտակ. եւ կարգն չորրորդ՝ յակինթ եւ բիւրեղ եւ եղունգն. ընդելուզեալ, յոսկի կապեալ՝ յիւրաքանչիւր կարգս կայցեն։ Եւ եղիցին ականքն յանուանց որդւոցն Իսրայէլի երկոտասան, ըստ անուանց նոցա գրեալք քանդակաւ՝ իւրաքանչիւր ըստ անուան իւրում լիցին, ըստ ազգացն երկոտասանից։ Եւ արասցես տախտակ մի հիւսկէն վերջիւք, գործ շղթայագործ յոսկւոյ սրբոյ։ Եւ արասցես ի վերայ տախտակին երկուս օղս ոսկիս, եւ դիցես զերկուս օղսն ոսկիս ի վերայ երկուց ծայրից տախտակին։ Եւ դիցես զերկուս շղթայագործսն ոսկիս ի վերայ երկոցուն օղոցն առ ծայրիւք տախտակին. եւ զերկուս ծայրս երկուց շղթայագործիցն տացես ի վերայ երկոցունց մաճ եւ դիցես ի վերայ թիկանց վակասին ի ճակատ երեսաց նորա։ Եւ արասցես երկուս օղս ոսկիս, եւ տացես զնոսա ի վերայ երկուց ծայրից տախտակին՝ առ եզերքն՝ որ լցէ հանդէպ վակասին ի ներքոյ կողմանէ. եւ արասցես երկուս օղս ոսկիս, եւ տացես զնոսա ի վերայ երկուց ուսոց վակասին ի ներքոյ կողմանէ՝ յանդիման միմեանց միաբան, եւ զաղխս նորա ի վերայ մենքենայից վակասին, եւ պինդ ունիցին զտախտակն յօղոց նորա մինչեւ ցօղս վակասին, ի նիւթոյ կապուտակէ. զի լցէ ի վերայ մենքենայից վակասին, եւ մի զերծանիցի տախտակն ի վակասէ անտի։ Եւ առցէ Ահարոն զանուն որդւոցն Իսրայէլի ի վերայ տախտակի դատաստանին ի լանջս իւր, ի մտանել իւրում ի սրբութիւնն ի յիշատակ հանապազորդ առաջի Աստուծոյ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՐԻՒՐԴ ԳԼԽԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ։

Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի առ արքայ ի Քեբրոն, եւ ուխտեաց ընդ նոսա ուխտ արքայ Դաւիթ ի Քեբրոն առաջի Տեառն. եւ օծին զԴաւիթ թագաւոր ի վերայ ամենայն Իսրայէլի։

Որդի ամաց երեսնից Դաւիթ ի թագաւորել իւրում՝ եւ քառասուն ամ թագաւորեաց. եօթն ամ եւ վեց ամիս թագաւորեաց ի Քեբրոն ի վերայ Յուդայ՝ եւ երեսուն եւ երիս ամ թագաւորեաց ի վերայ ամենայն Իսրայէլի եւ Յուդայ յԵրուսաղէմ։

Եւ չոգաւ Դաւիթ եւ արք նորա յԵրուսաղէմ առ Յեբուսացին բնակեալ

յերկրին. եւ ասացաւ Դաւիթի՝ թէ ոչ մտցես դու այսր, քանզի ընդ դէմ դարձան կոյրք եւ կաղք եւ ասեն. մի մտցէ այսր Դաւիթ։ Եւ առ Դաւիթ զՍիոն եւ զամրոց նորա՝ այն է քաղաք Դաւթի։ Եւ ասէ Դաւիթ յաւուր յայնմիկ. Ամենայն որ հարկանիցէ սրով զՅեբուսացին, եւ մատիցէ սրով եւ ի կաղսն եւ ի կոյրս եւ յատելիս անձին Դաւթի։ Վասն այնորիկ ասեն. կոյրք եւ կաղք մի մտցեն ի տուն Տեառն։ Եւ նստաւ Դաւիթ յամրոցին՝ եւ կոչեցաւ այն քաղաք Դաւթի. եւ շինեաց զնա քաղաք Դաւիթ շուրջանակի ծագէ ի ծագ՝ եւ զտունն իւր։ Եւ երթալով երթայր Դաւիթ եւ մեծանայր՝ եւ Տէր ամենակալ էր ընդ նմա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՐՔԻՒՐԵԷ։

Եւ եղիցի ի մտանել քահանայից ընդ դուռն սրահին ներքոյ զգեցցին զպատմուճանս կտաւիս. եւ մի զգենուցուն ասուիս ի պաշտամանն իւրեանց՝ ի դրանէ ներքին սրահին։ Եւ խոյրս կտաւիս ունիցին ի գլուխս իւրեանց՝ եւ անդրավարտիս կտաւիս յերանս իւրեանց՝ եւ ոչ զգենուցուն բռնութիւն։ Եւ յելանեն իւրեանց յարտաքին սրահն առ ժողովուրդն՝ մերկասցին զպատմուճանս իւրեանց որով պաշտեցինն՝ եւ դիցեն զնոսա ի սենեակն սրբութեանց՝ եւ զգեցցին այլ պատմուճանս. եւ մի սրբեսցեն զժողովուրդն պատմուճանօք իւրեանց։

Եւ զգլուխս իւրեանց մի գերծցեն՝ եւ զվարսս իւրեանց մի անօսրացուսցեն. ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց։ Եւ գինի մի արբցեն ամենայն քահանայքն ի մտանելն իւրեանց ի ներքին սրահն։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՐՈՍՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք՝ պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք՝ զզօրութիւն ազգաց կերիջիք՝ եւ մեծութեամբ նորա սքանչելի լինիջիք։ Փոխանակ ամօթոյ ձերոյ՝ կրկին ուրախութիւն՝ եւ փոխանակ անարգանաց ձերոց՝ ցնծութիւն՝ եւ ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն՝ եւ ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։ Զի ես եմ Տէր որ սիրեմ զարդարութիւն՝ եւ ատեմ զյափշտակութիւնս յանիրաւութենէ. տայ ըզվաստակս նոցա արդարոց՝ եւ ուխտ յաւիտենից ուխտեցից ընդ նոսա։ Եւ ծանիցի ի մէջ ազգաց զաւակ նոցա՝ եւ ծնունդք նոցա ի մէջ ժողովրդոց. ամենեքին որ տեսանիցեն՝ ճանաչիցեն զնոսա՝ եւ ասիցեն թէ սոքա են զաւակ օրհնեալ յԱստուծոյ՝ եւ ուրախութեամբ ուրախ եղիցին ի Տէր։ Ցնծասցէ անձն իմ ի Տէր՝ զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան՝ իբրեւ փեսայի ետ ինձ պսակ՝ եւ իբրեւ հարսն զարդու զարդարեաց զիս։ Եւ իբրեւ երկիր որ աճեցուցանէ զծաղիկս իւր՝ եւ իբրեւ զպարտէզ որ բուսուցանէ զսերմանիս իւր՝ այնպէս ծագեսցէ Տէր զարդարութիւն իւր եւ զցնծութիւն առաջի ամենայն ազգաց։

Պետրոսէ առաւելոյն է Կարո՛ղէիցայ առաջին ընդունող է ընդերցողաց։

Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն եւ զամենայն նենգութիւն, եւ զկեղծաւորութիւնս եւ զնախանձ, եւ զամենայն չարախօսութիւն. իբրեւ զարդի ծնեալ մանկունս՝ խօսուն եւ անխարդախ կաթինն փափագիցէք. զի նովաւ աճիցէք ի փրկութիւն, եթէ ճաշակեցէք զի քաղցր է Տէր։ Առ որ մատուցեալ էք ի վէմն կենդանի. որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի յԱստուծոյ ընտրեալ եւ պատուական է, եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր՝ յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւորն պատարագս՝ հաճոյս Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Քանզի՝ կայ իսկ ի գրի, եթէ ահաւասիկ դնեմ ի սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ ի նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ։ Ձեզ այսուհետեւ հաւատացելոցդ՝ վէմ պատուական, իսկ անհաւատիցն՝ վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան, եւ վէմ գլորման եւ վէմ գայթակղութեան, որ գայթակղին ապստամբեալք ի բանէն՝ յոր եւ եդան։ Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն. ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնսն նուիրեցէք այնմ՝ որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն։

Աղէ. ալէ։ Խոս ոովան եղերուք Տեառն զի բարի է։ (Սաղմ. ՃԺԷ)։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեային՝ հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն։ Ասէ ցնոսա Յիսուս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ Սիմովն Պետրոս եւ ասէ. Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի՛ քեզ Սիմովն՝ որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ՝ զի դու ես վէմ՝ եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ՝ եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։ Եւ տացս քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս՝ եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։

Ն՝ ասէ Հաւատամքն. Ա ընդ՝ այդն վերքեքերին, Ա կարդալ Տարեկան Պարգեն մինչ յՈղջոյնն։

Ն՝ մինչ ակամին Ն՝ զիկոպարոնանդն առել զարոզն «Աստուած մեծ», նուիրեալն ի Հայրապետունն ի Ծառնկա անկանի։

Աստուած մեծ եւ սքանչելի գործ զորութիւն, որ ա՛ր ա՛ր ա՛ր զինն զը ւարթ նոց, ընդ նոսի՝ ն եւ ի հոզեզի նացս հաճեցար ընդունել փառս բանիս եւ երկրպագութիւն մեր զ ճառագայթ փառաց եւ ծագումն ան մեկնելի լուսոյն, եւ զոր մուրթեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Գ. Եղերամարգ մարդ ճըշմարիտ, եկիր կամաւ ի փրկութիւն մեր զճառագայթ փառաց եւ ծագումն մեր զանմեկնելի լուսոյն, եւ զոր մուրթեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Դ. Որ ա՛ր ա՛ր ա՛ր ա՛ր ա՛ր ա՛ր ա՛ր սրբարանս ըզքեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Ե. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Զ. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Է. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Ը. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Թ. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Ժ. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Ի. Ողորմեա՛ մեզ ամենայն ազգս հոգեզի նացս հաճեցար ընդունել զքեզ՝ եւ զանձինս ի պատիւ փառաց ասուածուն թեամբ։

Լուր Տէր եւ ողորմեա։

Ամեն։

դա սէ ր , աղաւ։

Լուր Տէր եւ ո՛ղ ո ր մեա

Ընտ րե ցե ր ի մարդ-

կա նէ ժո ղո վուրդ սեպ հա-

կան զե կե զե ցի քո սուրբ

տա ճա ր բնա-

կու թեան փա ռաց ա մե նա-

սուրբ Եր բոր դու թեա -

նդ, աղաւ։

Լուր Տէր եւ ո՛ղ ո ր մեա

Կար գե ցե ր ի սմա

հո վիւս եւ վար դա պետս եւ

կար գըս բա րե կրօն պաշ տօ -

նէ ի ց, եւ զա մե նայն

դասս զի նուռ ռու թեան սո ր

հա ղո ր դս ա ր ա-

րեր ան մարմ նոցն սրբ բա սաց

փա ռա բա նու թեա -

նց, աղաւ։

Լուր Տէր եւ ո՛ղ ո ր մեա

Ընկ կա ւ եւ այժմ ըզ

ծա ռայս քո զոր ընտ րե ցե-

ր եւ կո չե ցեր յա ռաջ-

նոր դու թիւն կա թու ղի կէ ե-

կե ղե ցւոյ քում սրբ բոյ, եւ

լե ր սբ մա օգ-

նա կան եւ պաշտ պան հո վուել

ընդ նոր ժո ղո վուրդ քո զոր

ըս տա ցար պատ ուա կան ար-

եամ բըդ քով սրբ բո -

նէ, աղաւ։

Լուր Տէր եւ ո՛ղ ո ր մեա

Ցիշ եա զուխտ սի ր ել-

եաց քոց եւ հե ղ

զա ռատ ո ղոր մու թիւնդ ի

վե ր այ ժա ռան գու թեան քո

, աղաւ։

Լուր Տէր եւ ո՛ղ ո ր մեա

Պահ եա ըզ սա ա-

նա բատ ի գործ վե ր ա տես-

չու թեա ն ա ռա քե լա-

կան Ա թո ռոյ Հա յաս տան-

եայց ա զինս, եւ ա ռաջ նոր-

դեա սբ մա յա-

մե նայն ճա նա պարհս ար դա-

ռու թեա ն, աղաւ։

Լուր Տէր եւ ո՛ղ ո ր մեա

Զօ ր ա ցո զա մե-

նայն ուղ զա փառ ե պիս կո-

պո սու նս հո վուել ար դա-

ռու թեամբ ըզ ժո ղո վուրդ քոյ, եւ

զա մե նա յն ժա-

ռան գա ւորս ե կե ղե ցւոյ
քո պահ եա ա նա բատ հան-
դերձ վա նա կա նօք եւ ճրագ-
նազ գեաց մի անձ նա ցե լո-
ՅԱՐԲ ԲԷՐԹ ՀԱՅ, #
վք՝ աղա։

Լուր Տէր եւ ո ղո ր մեա
ԻՐՈՅ ԻՆՉ,
։

Հաս տատ եա ի զո-
րու թիւն ա մե նա յաղթ բաղ-
կի քո զբա րե պաշտ թա-
գա ւո րըն մեր եւ զիշ խանս եւ
զա մե նայն զին ւոր եալ ման-
կու նըս նո րա՝ եւ շնորհ եա
ՊԱՀ ԻՆՉ, ԲԱ ՀԱ ՍԱ
զխա զա զու թիւն

ե կե ղեց ւոյ քո սրբ բո-
ՅԱՐԲԱԲ ԲԷԲՐԹ ՀԱՅ, #
յ՝ աղա։

Լուր Տէր եւ ո ղո ր մեա
ԻՐՈՅ ԻՆՉ,
։

Ֆեր կեա ըզ ժո ղո-
վուր դրս քո , եւ օրհ-
նեա ըզ սո սա
որք եր կիր պա գա նեն ա ռա-
ջի ա մե նա զօր տէ ր ու թեա-
նըդ քո , աղա։

Լուր Տէր եւ ո ղո ր մեա
ԻՐՈՅ ԻՆՉ,
։

Եւ եւս ա ռա ւե լ
ըզ յոր դո ր ու մն սի ր ոյ եւ

ՏԷՐ ո ղոր մեա

Տէր ո ղոր մեա լուր Տէր ե ւ
ո ղո ր մեա :

Ա՝- Եղեցաքոյնն յԱրհիեպիսկոպոսաց ընՐԻՈՆՈ՝- ՂԱԶԱՐՈՍ.

Տէր Աստուած՝ արարիչ ամենայն արարածոց, որ արարեր զամենայն յոչնչէ, և ածեր զմեզ յայս կենդանութիւն, և ցուցեր մեզ ճանապարհ կենաց և փրկութեան, և արժանաւորս արարեր զմեզ այսմ ահաւոր և երկնաւոր խորհրդոյ քահանայականս կոչման։ Դու ես որ եդեր զմեզ ի պաշտօնս յայս՝ զօրութեամբ սուրբ Հոգւոյդ և կարգեցեր աւետարանիչս նորոյ ուխտիդ։ Դու շնորհեցեր մեզ զգիտութիւն սրբութեան քո, և օրվ է բաւական խօսել զզօրութիւնս քո, և լսելի առնել զամենայն օրհնութիւնս քո։ Տէ՛ր ամենայնի և արարիչ երկնի և երկրի և ամենայն երևելեաց և անտեսանելեաց, որ նստիս յաթոռ փառաց և զխոնարհս տեսանես, անսկիզբն՝ անբաւ բնութիւն, Հայր Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի,

ՅԱՐԲ ԲԷՐԹ ՀԱՅ, #
ՅՐ՝ աղա։

Ըզ գոր ծրս բար եաց պար գե ւել
մեզ խընդ րե մք։

Տուր մեզ Տէր Աս տը ուա-
ծ։

Զան ձի նը ս մե ր
եւ ըզ միմ եա նրս Տեա ռն
Աս տու ծոյ ա մե նա կա լին
յանձն ա բաս ցուք։

Քեզ Տեա ռնդ յանձն ե ղի-
ցու ք։

Ո ղոր մեա ց
մե զ Տէր Աս տուած մեր ըստ
մե ծի ո ղոր մու թեան քում
ա սաս ցուք ա մե նեք եան
մի ա բա նու թեամբ։

որ է պատկեր փառաց քոց՝ և կնիք անպարագիր էութեանդ, յանձն իւր ցուցանելով զԱյրդ համագոյ· որ նոյն ինքն է Բան կենդանի, լոյս ճշմարիտ, իմաստութիւն, և զօրութիւն ամենայնի, Աստուած՝ յառաջ քան զյաւիտեանս: Նովաւ և Հոգիդ քո սուրբ յայտնեցաւ մեզ, որ է Հոգի ճշմարտութեան, Հոգի իմաստութեան և հանճարոյ, Հոգի գիտութեան, և խորհրդոյ, և զօրութեան, Հոգի երկիւղածութեան, որով և որդեգրեցաք իսկ Հօրդ երկնաւորի, և ընկալաք զառհաւատչեայն պտուղ հանդերձելոց յաւիտենից բարեաց· նոյն ինքն է զօրութիւն կենդանարար, յորմէ ամենայն բանաւոր և մտաւոր արարածքս զօրանան օրհնել զքեզ, գովել, և մշտնջենաւոր փառաբանութիւն քեզ մատուցանել, վասն զի ամենեքեան ստեղծուածք անարատ ձեռաց քոց եմք: Դեղ երկիրպագանեն հրեշտակք և հրեշտակապետք, աթոռք և տէրութիւնք, իշխանութիւնք և զօրութիւնք· զքեզ շուրջ կան բազմաչեայ քերովբէք և վեցթեւեան սերովբէք, որք սաւառնաթեւեալք աղաղակեն անլռելի ձայնիւ, և զերեքսրբեան օրհնութիւնս մատուցանեն ասելով· Սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո: Դու ստեղծեր զմարդն հող յերկրէ, և ի պատկեր քո բարերարութեանդ պատուեցեր զնա, և եդեր զնա յադինական դրախտին փափկութեան ի կեանս անվախճան և ի հանգիստ յաւիտենից· և ի պահել պատուիրանին՝ խոստացար նմա զմշտնջենաւոր կեանս և զանապականութիւն: Բայլ զի էանց զպատուիրանաւ քով և անկաւ ի պատրանս օձին խաբէութեան, ապա և մահկանացու եղև՝ կամաւն իւրով, և դու արդար դատաստանաւ քո մերժեցեր հաներ զնա ի դրախտէն փափկութեան յաշխարհս յայս, և սահմանեցեր նմա դառնալ անդրէն ի հող յորմէ ստեղծաւն: Սակայն ի վերայ այսր ամենայնի ոչ անտես արարեր ողորմածդ Աստուած՝ զգործս ձեռաց քոց, այլ հայրախնամ ողորմութեամբդ քո գթացար յազգս որդւոց մարդկան, և առաքեցեր զծոցածին և զէակից Որդիդ քո սիրելի, որ եկն ի լման ժամանակաց, ըստ կանխատաց մարգարէիցն գուշակելոյ, և զգեցաւ մարմին յանարատ կուսէն Մարիամայ, ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս՝ առանց մեղաց· վասն զի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ Աստուածն յաւիտենական, և փրկեաց զմեզ ի խաւարէ կռապաշտութեան կամաւոր չարչարանօքն և անապական թաղմամբ՝ և յուսափայլ և կենսաբեր յարութեամբն, և ստացաւ զմեզ իւր ժողովուրդ սեպհական, ի թագաւորութիւն և ի քահանայութիւն, յազգ սուրբ: Լուաց զմեզ ի ջուր սրբութեան աւազանին և արար բնակարան Հոգւոյդ սրբոյ· համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ մեծութեանդ ի բարձունս: Եւ զէակիցն քո և զմշտնջենաւորակից Հոգիդ սուրբ առաքեաց ի բարձանց՝ ի դասս առաքելոցն: Որոյ եկեալ ի վերնատունն սուրբ յաւուր մեծի Պենտեկոստէին՝ մկրտեաց զնոսա ի հուր Աստուածութեան իւրոյ, և բաժանեալ ի նոսա հրեղէն լեզուօք՝ արբոյց նոցա զհուրն կենդանի և կենդանարար, որով վիճակեցան զզանազան կողմանս աշխարհի, կենագործել զնոսա քարոզութեամբ սրբոյ Աւետարանին՝ ըստ տարբերութեան լեզուացն հրեղինաց, և ձեռնադրութեամբ ի քահանայապետութիւն և ի վարդապետութիւն, և իշխանութեամբ թողութիւն տալոյ մեղաց, և առնելոյ նշանս և արուեստս, ի հալածումն դիւաց, ի բուժումն ախտից, ի քակտումն մեղաց, և յազատութիւն ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց միածնի Որդւոյ քո սիրելւոյ: Ըստ նմին և Հայաստան աշխարհս մեր վիճակեցաւ երկուց ընտրելոցն Առաքելոց Թարթուղիմէոսի և Թադէոսի, որք լուսաւորեցին զկողմանքս հիւսիսոյ ի սառնամանեաց հեթանոսական խաւարային դիցապաշտութեանցն: Զնոցին սրբոց առաքելոց ըզկարգի պաշտամանն պակաստութիւն՝ ելից մեծն Գրիգորիոս՝ ճշմարիտ խոստովանողն Քրիստոսի Որդւոյ քո՝ և լուսաւորիչն ազգիս մերոյ, որ և զպակասութիւն չարչարանաց Միածնիդ քո ելից ի մարմնի իւրում բազմաչարչար նահատակութեամբն և քրտնաջան բազմամեայ քարոզութեամբ:

Եւ արդ՝ Տէր մեր և Աստուած՝ բարերար և բազումո-

ՀՍՍՌ-Արա ССР

զորմ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, բարեխօսութեամբ սոցին ընտրելոց՝ զորս յիշատակեցաքս՝ ընկալ զաղաչանս ժողովրդեան քո՝ զոր ժողովեցեր ի տաճարի փառաց սրբութեան քո, և զծառայս քո զայս՝ զձեռնադրեալս ի մէնջ, զոր դու իսկ ընտրեցեր և ընկալար ի Հայրապետութիւն և յառաջնորդութիւն Ազգիս Հայոց, անշարժ և անսասան պահեա ի կոչմանս յոր կոչեցաւ: Շնորհեա սմա սիրտ զգաստ, զգուշութեամբ պահել զամենայն զպատուիրանս քո, սիրել զքեզ յամենայն զօրութենէ և ի բոլոր սրտէ, և ի բովանդակ մտաց իւրոց, և գնալ ճշմարտութեամբ ի ճանապարհս արդարութեան, սուրբ սրտիւ և անկեղծ հաւատով, առաւելեալ ի գործս բարիս ըստ կամաց քոց բարեսիրաց: Կացցէ հաստատուն և անսարատ ի կարգի իշխանութեան իւրոյ առաջի քո, ի Կաթուղիկէ առաքելական Եկեղեցւոջ, շինեալ և հաստատեալ ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց և մարգարէից: Հայեաց քաղցրութեամբ ի ժողովուրդս քո յիշելով զուխտ և զողորմութիւն սիրելեաց քոց, և պահեա զսուրբ և զկաթուղիկէ Եկեղեցի քո անարատ յերևելի և յաներևոյթ թշնամեաց ճշմարտութեան: Պահեա Տէր ընդ երկայն աւուրս զպատուական Հայրապետս մեր՝ զգլուխ մարմնոյ Եկեղեցւոյ քո սրբոյ, և տուր սմա առաջնորդել հեզութեամբ և ուղղափառ վարդապետութեամբ ժողովրդեան քում. բարձրացո՛ ի մէջ տիեզերաց զեղջիւր օծելոյ քո:

Զգեցո՛ սմա զպատմուճան ուրախութեան, որ է արդարութիւն և սրբութիւն, առաւելեալ քան զկանս պատուական Հարոնեան պատմուճանին: Տո՛ւր սմա զշնորհս պաշտամանս այսորիկ՝ որպէս ետուր մեծին Մովսիսի՝ հաւատարիմ ծառային քո, և հոգելից տեսանողին Սամուէլի, և վիմին հաւատոյ երանելւոյն Պետրոսի՝ և ընտրելոցն քոց որդւոցն որոմման, և այլոց սրբոց՝ զորս յիւրաքանչիւր ժամանակի ընտրեցեր, և ի ձեռս նոցա բարեգործեցեր յաղագս մարդկան: Նոյնպէս և զսա արժանաւորեա լինել հաւատարիմ և իմաստուն տնտես և սպասաւոր նորոյ ուխտի քո: Եւ զժողովուրդս քո՝ որ հաւատացաւ սմա, զոր ընկալար արեամբ Միածնի քո, անարատ պահեա, որպէս զի մերժեալ յանձանց զամենայն զբիծ և զաշխարհական ցանկութիւն, մեռցին մեղաց, և կեցցեն արդարութեան, զգեցեալք զսրբութիւն Քրիստոսի քո, և եղեցին մի հօտ՝ և մի հովիւ. և ի միասին արժանաւոր լեցին յաւիտենական ուրախութեանցն հասանել ընդ ամենայն սուրբս քո: Եւ մեր ամենեցուն ընկալեալ զսա հոգևոր և սուրբ ողջունիւ, գոհասցուք զքո առատ մարգասիրութենէդ՝ յաղագս տուելոցս մեզ բարեաց, և խոստացելոցն հանդերձեալ անբասառ կենաց. որոց լեցի ամենեցուն մեզ արժանի լինել շնորհօք միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր ամենակալի, և համագոյ սուրբ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ առեալ երէցագոյն Աշխիեպիսկոպոսին ի սրբոյ սեղանոյն զսկիզբն աղօնի սրբբարոյս դիւռոնի էյեռս ի՛ր՝ և բարձրացուցեալ՝ հեղս զնիւռոնն ի գագաթն Ալուերեցոյն ասելով Շարական Դ. Առաքելոյ աղաւնոյ Լալ:

Դպիրքն. — Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Եւ երէցագոյնն Աշխիեպիսկոպոսն է դասին քոյր մատաղէ ի-բեանց նկարելով ի-ն սրբալոյս Ա՛ի-ռոնս ի գագաթնանէն և ի վայր՝ կապարեն զնոսա, որպէս զի առնուլ ի-ղոյն զարարագ ճառագայթեալ խաչն:

Եւ յօծանելն ասէն.

Օրհնեսցի օծցի եւ սրբեսցի գագաթն Տէր (այս անուն) Կաթուղիկոսիս, այս նշանաւ սուրբ Խաչիս եւ սուրբ Աւետարանաւս, եւ սուրբ Միւռոնաւս, եւ աւուրս շնորհիւ՝ անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Եւ ապա արքանէն զպիսկոպոսաց Հայրապետական Աւագն ոսկեթել է գլուխ նորա, և կապէն զկոնդէրն զգեստաւոր յաջոյ կողմն, և արքանէն զնովա զնդրպոր բաղմեալ՝ ոնելով նկարակերպ և ասընկերգոյն ապրոպա և անկնոնս զարդարեալս, և ապա է յեռն զԱ-ապանն Հայրապետական զանուանեալն "Լ-ուսաւորչի,,: Եւ յետ այնորիկ կոչ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ:

Դպիրքն երգեն Շարական Դ. 781.

Այսօր ուրախացեալ ցնծան երկնից:
Ե- Որք արժանաւորեցայք: 887

Ա՛ղա Սաղմոս կոչէր (ԻԲ).

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցի։

(Ե՛ ԸՆԴԵՌՆՈՒ Զ ՈՍԿ ՅԱՐԵՎԵԼԻՈՊՈՍՈՅ։)

Պետրոսի առաքելոյն ի Կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ զերիցակից եւ վկայ չարչարանացըն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոյ՝ հաղորդ։ արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ։ վերակացու լինել՝ մի իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ։ մի զոշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ։ մի իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին։ զի յերեւել հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն։

Սոյնպէս եւ երիտասարդք հնազանդ լերուք ծերոց, ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք։ զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց։ Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ։ զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի։ զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր։

Արթուն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ խնդրէ՝ թէ զով կլանիցէ։ որում ի դիմի հարկանիցիք հաստատեալք հաւատովք։ գիտասջիք զնոյն անցս չարչարանաց՝ եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս կատարեալ։ Եւ Աստուած ամենայն շնորհաց՝ որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական ի փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք՝ նա կազդուրեցուսցէ՝ կարողացուսցէ՝ հաստահիմն արասցէ։ նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս։

Սաղմոս կոչէր (ԽԴ).

Ալէ՛, Սփռեցան շնորհք ի շրթանց քո։ վասն այսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան։

(Ե՛ ԸՆԴԵՌՆՈՒ Զ ՈՍԿ ՅԱՐԵՎԵԼԻՈՊՈՍՈՅ։)

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրեւ ճաշեցին՝ ասէ ցՍիմովն Պետրոս Յիսուս։ Սիմովն Յովնանու՝ սիրես զիս առաւել քան զդոսա։ Ասէ ցնա։ այո՝ Տէր՝ եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա։ արածեա զգառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա։ Սիմովն Յովնանու՝ սիրես զիս։ Ասէ ցնա։ այո՝ Տէր՝ եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա։ արածեա՛ զոչխարս իմ։ Ասէ ցնա երիցս անգամ։ Սիմովն Յովնանու՝ սիրես զիս։ Տրտմեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս։ եւ ասէ ցնա։ Տէ՛ր՝ դու զամենայն գիտես՝ եւ դու իսկ զամենայն ճանաչես՝ եւ եթէ սիրեմ զքեզ։ Ասէ ցնա Յիսուս։ արածեա՛ զոչխարս իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ՝ զի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր՝ եւ երթայիր յո եւ կամէիր։ եւ յորժամ ծերասցիս՝ ձեռս ի վեր կալցես՝ եւ այլք ածցեն քեզ

գօտի՝ եւ տարցին ուր ոչ կամիցիս։ Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած։ եւ զայս իբրեւ ասաց՝ ասէ ցնա։ Եկ զկնի իմ։

Ե՛ ապա հայրենասէրն զգաստն Հայրապետն, և պան ղողջոյնն և կապարեն զՊապարգն։

Յաւարտ սրբոյ Պապարգին ակառնին դպիրք։ երգել զՀարանն Դ, Հրաշափառ Աստուած, և Ամենայն կարգեալ քովանդակ ուխտին ըստ օրինի՝ զգեստաւորեալ Արքեպիսկոպոսք՝ Եպիսկոպոսք՝ և զարքապետք, կերոնակիրք և Խաչ Հայկազունք առաջի, և Սարկաւագունք խնկարկելով յառաջի Հայրապետին, ածին զնա յեկեղեցւոյն ի Զեհրանն, և յորժամ վերստին յԱՐՈՒՆ Պանուղկոսական ի սրահին «Ծապկեալ այլան», առնուանելոյ՝ երգեն զՀարականն Դ, Այսօր քահանայապետ ճշմարիտ Աստուածային օրինօքն պատուեալ։

Յետ այնորիկ հարցուցեալ Սարկաւագն, Սուրբ խաչիւս։ Ե՛ Հայրապետն ասէ։ Պահպանիչ։ Հայր մեր։ Մատուցին ածնեալեան ի հաստատեալ աջոյ նորապատակ Հայրապետին, և ընկալեալ զօրհնութիւն նորա՝ սրշակին ի խաղաղութիւն։

Որ հանդիպիմ ամին՝ յիշեսիմ զսպագրական ուղղագրող մատենական զվահրամ Եպիսկոպոս Մանկունի յարժանաւայց յաղօթս։

3029

2013